

**ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2018 թվականի
մարտի 29-ին կայացած Գիտակա Խորհրդի նիստի**

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 31-ը (ցուցակը կցվում է)

Նախքան խորհրդի նիստի բացումը Խորհրդի նախագահ Մ.Ա.Գրիգորյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. Մագիստրոսական թեզերի և ավարտական հաշվետվությունների կատարման ընթացքը ամբիոններում /զեկ. ամբ.վարիչներ/
2. 2017/2018 ուստարվա քննությունների լուծարքային շրջանի արդյունքների քննարկում /զեկ. փոխդեկան Ա.Գրիգորյան/
3. 2018/2019 ուստարվա ամբիոնային ուսումնական պլանների քննարկումն ու հաստատումը /մեթ. խորհրդի նախ. Թ.Գ.Վարդանյան/
4. «Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության» ամբիոնի վարիչի հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերաբերյալ /ամբ. վարիչ Ս.Հ.Հայրոյան/
5. Գիտական հաղորդում
6. Ընթացիկ հարցեր

1. **ԼՄԵՑԻՆ.** Ամբիոնի վարիչներ Թ.Գ.Վարդանյանի, Ս.Հ.Հայրոյանի, Ա.Հ.Պոտոսյանի, Շ.Վ.Խաչատրյանի, Գ.Վ.Մարկոսյանի, Ս.Ռ.Սուվարյանի, Պ.Գ.Դավթյանի և Հ.Ի.Մովսեսյանի հաղորդումը ամբիոններում 2017/2018 ուստարվա ավարտական հաշվետվությունների և մագիստրոսական թեզերի կատարման վերաբերյալ: Բոլոր ամբիոնի վարիչները մանրակրկիտ կերպով ներկայացրեցին ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի հետ կապված աշխատանքների ընթացքն ամբիոնում: Հաղորդման ընթացքում նրանք նշեցին, որ

հայտարարությունների ցուցատախտակի վրա փակցված են «ղեկավար-ուսանող» հանդիպումների գրաֆիկը: Հաղորդման ընթացքում ամբ.վարիչները նշեցին, որ բոլոր ղեկավարներին հանձնարարվել է հետևողական լինել և հնարավորինս ուշադիր լինել ավարտական աշխատանքների թեմատիկային, արդիականությանը և ուսանողի ինքնուրույնության գործակցին:

Բոլոր ամբիոնի վարիչներն էլ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ընթացքը գնահատեցին բավարար՝ ուսանողներին նախնական պաշտպանությանը թույլատրելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. դոց.Մ.Ա.Գրիգորյանն իր խոսքում հորդորեց ամբիոնի վարիչներին և բոլոր ներկաներին, որպեսզի բոլոր ղեկավարները ծանոթանան ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գնահատման նոր կարգի հետ: Ինչպես նաև նա նշեց, որ ցանկալի կլինի հետագա նիստի ժամանակ քննարկվի գնահատման նոր կարգի հետ ղեկավարների իրազեկության և ծանոթության փաստը: Մ.Գրիգորյանն առաջարկեց գնահատման նոր կարգի 1 կամ 2 օրինակ տեղադրել ամբիոնում՝ ղեկավարների ծանոթացման համար: - Աշխատանքները ներկայացվելու են առաց որևէ ընթերցանության,- ասաց Մ.Գրիգորյանը, - Մեծ պայքար պետք է տանենք թեմաների կրկնությունը բացառելու ուղղությամբ: Ի վերջո այս աշխատանքով շրջանավարտը ձեռք է բերում գիտական առաջին աստիճանը: Խոսքի ավարտին Մ.Գրիգորյանը մեկ անգամ ևս նշեց, որ աշխատանքներն ուղարկելու են գրախոսության:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

2. ԼՍԵՑԻՆ. Փոխղեկան Արսեն Գրիգորյանի հաղորդումը 2017/2018 ուստարվա 1-ին կիսամյակի քննությունների ընթացքի վերաբերյալ: Նա ներկայացրեց ուսանողների առաջադիմության վերաբերյալ ամփոփ տվյալները: Հաղորդման ընթացքում Ա.Գրիգորյանը նշեց, որ թվով 15 ուսանող 2-րդ լուծարքից հեռացվել են: Նա ներկայացրեց նաև 2-րդ ընթացիկից հետո լուծարքային առարկաների համար վճարման կարգը:

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ.

դոց.Գ.Փ.Ալեքսանյանը՝ արդյո՞ք նպատակահարմար չէք գտնում բարձր ՄՈԳ ունեցող ուսանողներին խրախուսել և ոգևորել՝ ուսման նկատմամբ հետաքրքրությունն էլ ավելի բարձրացնելու նպատակով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

պրոֆ.Թ.Գ.Վարդանյանը նշեց, որ, ըստ Գրիգորյանի հաղորդման, միջինում ընդունված գերազանցության նվազագույն 10% ապահովված է, ինչը ողջունելի է: Վարդանյանը ցավով նշեց, որ անբավարարների քանակը շատացել է: իր կողմից դասավանդվող առարկաների ընդհանուր պատկերի հիման վրա, Թ.Վարդանյանը նշեց այն արձանագրումը, որ ընդհանուր մակարդակն ընկած է, ինչն, ըստ ամենայնի, նվազելու տենդենց ունի: Կոչ արեց բոլոր աշխատակիցներին էլ ավելի պահանջկոտ լինել՝ ուսման որակը բարձրացնելու նպատակով:

դոց.Հ.Ի.Մովսիսյանն իր ելույթում նշեց, որ որակի վրա է ազդում նաև բացակայությունների քանակը և կոչ արեց դասախոսներին ուշադրություն դարձնել բացակայությունների քանակի վրա:

դոց.Հ.Ա.Բաբայանը իր խոսքում նշանակություն տվեց ներկայության համար տրվող 2 կրեդիտի կարևորությանը: - Գնահատման համակարգը փոխելուց հետո բոլոր կուրսերում բացակայությունների թիվը կտրուկ շատացավ,-ասաց Հ.Բաբայանը: Նա կարևորեց բացակայությունների խնդիրը և ուղղակի կերպով կապեց որակի հետ:

դոց.Ս.Ռ.Սուվարյանը խոսեց կրթական համակարգում փոփոխությունների մասին:
- Ոմանք գնահատումը հասկանում և փորձում են իրագործել պատժի կամ խրախուսման մեթոդով,-ասաց Ս.Սուվարյանը: Կոչ արեց բացակայությունների փաստը դիտարկել այլ հարթությունից: - Մենք մեր դասավանդման մեթոդիկայում, կամ մոտեցման մեջ ի՞նչն ենք փոխել, որպեսզի ուսանողները գան դասի: Գնահատում ենք զիտելիք, բայց Աշխարհն ասում է՝ հմտություն, կարողություն: Դասաժամի բովանդակությունը պետք է փոխել դեպի հետաքրքիրն ու բովանդակալիցը: Ի վերջո հաճախելիության խնդիրը ամբողջ հանրապետության խնդիր է: Ինչ խոսք, ուսանողի վրա ազդում է վարչական և տնտեսական միջոցառումների կիրառումը, ինչը վերջին տարբերակ է: Առաջին հերթին

անհրաժեշտ է ավելացնել մոտիվացիան՝ փոփոխություններ, փնտրտուք, հետաքրքրություններ, որպեսզի ուսանողը գա դասի,-ասաց Ս.Սուվարյանը:

դոց.Գ.Փ.Ալեքսանյանը իր ելույթում առաջ քաշեց այն փաստը, որ գնահատումն իրականացվում է դասախոսություններով և առաջարկեց գնահատման մեջ ընդգրկել նաև գործնականների և սեմինարների արդյունքները՝ այլ կերպ ասած, վերջիններս նույնպես գնահատման բաղադրիչ ունենան:

դոց.Մ.Ա.Գրիգորյանն ի հավելումն հնչեցրած մտքերի ու առաջարկությունների հիշեցրեց, որ գոյություն ունի բացակայությունների վերաբերյալ կարգ: Նշեց որ օրեկան տասնյակ ուսանողներ խնդրում են հարգելի համարել բացակայությունները, քանի որ աշխատում են, որպեսզի օգնեն ծնողներին: Առանձնացրեց նաև այն փաստը, որ կան ուսանողներ ովքեր բացակայել են, սակայն քննության ժամանակ առավելագույն գիտելիքն են ցուցաբերել:

- Մեր խնդիրն է ամեն ինչ անել, որպեսզի ուսանողը նորմալ գիտելիք ստանա և ավարտելով ԵՊՀ-ն դառնա հանրապետության համար բարձր որակավորում ունեցող մասնագետ: Մենք անելիք ունենք միջակայությունը վերացնելու դաշտում: Եկեք համակրանք առաջացնենք ուսանողի մոտ՝ գիտելիք տալով և փոխըմբռնում ցուցաբերելով: Փոխենք մեր մոտեցումը՝ ինքներս մեր հանդեպ պահանջկոտություն դրսևորելով, բարձր գիտելիքի որակ ցուցաբերելով, ինչից հետո այն պահանջենք ուսանողներից:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ. Մեթոդ խորհրդի նախագահ Թրահել Գերասիմի Վարդանյանի հաղորդումը 2018/2019 ուստարվա ամբիոնային ուսումնական պլանների վերաբերյալ: Թ.Վարդանյանը նշեց, որ կազմվել են մասնագիտական և փորձագիտական հանձնաժողովներ, կազմակերպվել են քննարկումներ, ինչի արդյունքում որոշ պլաններում կատարվել են փոփոխություններ:

ԱՌԱՋԱԼԿԵՑԻՆ. Հաստատել 2018/2019 ուստարվա ուսումնական պլանները:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել 2018/2019 ուստարվա ուսումնական պլանները:

4. ԼՍԵՑԻՆ. «Ջրակրկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության» ամբիոնի վարիչ Ս.Հ.Հայրոյանի հաշվետվությունը 2016-2017 ուս.տարվա ընթացքում ամբիոնում կատարած աշխատանքների վերաբերյալ: Հակիրճ ներկայացրեց ամբիոնում առկա հաստիքային ռեսուրսները, բակալավրիատում և մագիստրատուրայում սպասարկման ուղղությունները: Ներկայացրեց նաև մշակված և լրամշակված կրթական ծրագրերի մասին: Իր խոսքում Ս.Հայրոյանը մանրամասնորեն խոսեց ամբիոնում կատարվող գիտահետազոտական աշխատանքների և հրատարակված գիտական աշխատանքների վերաբերյալ: Բարձրաձայնեց մասնագիտության կարևորությունը և մտահոգություն հայտնեց վերջինս վերաբացելու ուղղությամբ: /Հաշվետվությունը կցվում է/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

պրոֆ.Վ.Պ.Վարդանյանն իր ելույթում առանձնացրեց ամբիոնում կատարված դրական աշխատանքը: Առանձնացրեց ամբիոնում գործող բոլոր մասնագետների փորձառու լինելը և վերջիններիս բարձր որակավորումը: Բարձրաձայնեց ամբիոնի հետևողականությունը ԵՊՀ կանոնադրությանը կատարված ուսումնագիտական աշխատանքներում: Վարդանյանն առաջարկեց ամբիոնի կատարած աշխատանքը ներկայացված ժամանակահատվածում գնահատել բավարար:

դոց.Մ.Ա.Գրիգորյանը նշեց ամբիոնի հնագույն լինելը և ջրակրկրաբանության բնագավառում առաջատար մասնագետներ պատրաստելը:

- Կիսում եմ Վ.Վարդանյանի առաջարկը ամբիոնի աշխատանքը գնահատել բավարար,- խոսքն ավարտեց Մ.Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել բավարար

5. ԼՍԵՑԻՆ. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի հայցորդ Գորիկ Դավթի Ավետիսյանի գիտական հաղորդումը «Անտառային գեոհամակարգերի էկոհամակարգային ծառայությունների մոդելավորումը և գնահատումը (Տավուշի մարզի օրինակով)» (ԻԴ.04.01 «Երկրաբնապահպանություն») թեմայի վերաբերյալ:

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ.

դոց.Ս.Ա.Գրիգորյան – Ինչպե՞ս է գնահատվել սողանքների կանխարգելման գործառույթի տնտեսական արժեքը: Ո՞րն է դրա չափման միավորը:

պրոֆ.Ս.Հ.Հայրոյան – Արդյո՞ք աշխատանքի ընթացքում առանձնացվել են մակերեսային սողանքների տեղամասերը:

դոց.Ա.Ս.Սարգսյան – Արդյո՞ք մարզպետարանում չկա նախկինում արված նման աշխատանք և եթե ոչ, ապա ունեն արդյո՞ք տեղական ինքնակառավարման մարմինները նման ուսումնասիրության անհրաժեշտությունը:

դոց.Ս.Ռ.Սուվարյան – Ի՞նչ է հասկանում “սոցիալական ծախս” հասկացություն և “Էկոհամակարգային ծառայություն” ասելով:

պրոֆ.Թ.Գ.Վարդանյան – Արդյո՞ք ներքին հակասություն չեք տեսնում “Էկոհամակարգային ծառայություն” տերմինն օգտագործելով:

Ինչո՞ւ եք աշխատանքում ջրային բաղադրիչը գնահատում հենց հիդրոէներգետիկայի օրինակով:

դոց.Գ.Փ.Ալեքսանյան – Որո՞նք են աշխատանքում դիտարկված “անտառային գեոհամակարգերը”:

Բոլոր հարցերին Գ.Ավետիսյանը տվեց հանգամանալից պարզաբանումներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

պրոֆ.Հ.Յա.Սայադյան – Շնորհակալություն հանտնեց ուշադրության համար և փորձեց մի քանի շեշտադրում կատարել աշխատանքում առկա որոշ կետերի վրա: Նշեց որ «Էկոհամակարգային ծառայությունը» դա չհերքված և չհաստատված դաշտ է: Աշխատանքում կատարվել են ուսումնասիրություններ, որոնք ուղղված են անտառի սողանքապաշտպան դերը բացահայտելուն: Աշխատանքի հիմնական նպատակն է անտառի դերի էկոլոգիական արժեքի գնահատումը և կանխումը անտառի դիդարկումը որպես շինափայտի կամ վառելափայտի աղբյուր: Հ.Սայադյանը, որպես գիտական ղեկավար, նշեց, որ կատարվել է լուրջ գիտական աշխատանք և առաջարկեց երաշխավորել աշխատանքը դնել հրապարակային պաշտպանության:

դոց.Ս.Ռ.Սուվարյան. Կարևորեց թեման և առանձնացրեց դրա ակտուալ լինելը: Որպես «խնդրանք-դիտողություն» առաջարկեց աշխատանքը ներկայացնել այնպես, որ լսողի

համար ընկալելի լինի խոսքը: Նշեց, որ վերնագրում կրկվում են տերմինաբանական բառերը: Խոսքից անհայտ է դառնում էկոտորիստական ծառայությունների ոլորտում կատարված հաշվարկները:

- Ներկայացման ժամանակ ամենակարևորը հստակությունն է և մեկնակետի ֆիքսումը,-հավելեց Ս.Սուվարյանը

պրոֆ.Թ.Գ.Վարդանյան – Աշխատանքը բավականին հետաքրքիր է այն բանով որ շատ մոտեցումներ կան որ առաջին անգամ է կիրառվել Հայաստանի հանրապետության համար, սակայն խոսքում չասվեց մեթոդիկայի կիրառման մասին՝ թե ի՞նչ մեթոդիկա է կիրառվել: Աշխատանքը շատ կարևոր է անտառի բաղադրիչների գնահատման հարցում, գիտական տեսակետից բավականին հետաքրքիր: Եզրափակելով ելույթը Թ.Վարդանյանը նշեց, աշխատանքում առկա են որոշ թերություններ, որոնք շտկումների կարիք ունեն:

դոց.Ա.Հ.Պոտոսյան. Նշեց, որ աշխատանքը ՀՀ-ի համար առաջին փորձն է: Շեշտադրեց ամբողջ դաշտային աշխատանքի ինքնուրույն կատարված լինելը: Առանձնացրեց ներկայացման մասի թույլ լինելը: Առաջարկեց երկրաբան մասնագետների հետ խորհրդակցելուց հետո մասնագիտական ուղղումներ կատարել աշխատանքում: Առաջարկեց հաշվի առնելով դիտողությունները դնել հրապարակային պաշտպանության:

դոց.Գ.Փ.Ալեքսանյան – Ինքնուրույն մշակել և ներկայացրել է աշխատանքը: Պաշտպանվող թեզից պարզ չէր, թե էկոհամակարգային ծառայությունների ո՞ր որակն էր պաշտպանում: Առաջարկեց հետևողական լինել խոսքի գիտական ձևակերպումներին:

պրոֆ.Վ.Պ.Վարդանյան – Գովելի է ինքնուրույնության մասնակցության բարձր աստիճանը: Մատուցման մեջ խախտված էր հերթականությունը, ինչը խոսում էր փորձի պակասի մասին, սակայն ենթակա է հղկման: Աշխատանքը հետաքրքիր է ՀՀի տարածքի համար: Վ.Վարդանյանն առաջարկեց ուղղումներ կատարելուց հետո ներկայացնել հրապարակային պաշտպանության:

դոց.Մ.Ա.Գրիգորյան. Նշեց, որ Գ.Ավետիսյանը ջանասեր ուսանողներից է եղել: Մ.Գրիգորյանը գոհ չէր ելույթից: Առանձնացրեց, որ եզրակացությունների մեջ չկա գիտական այն նորույթը, որը կարտացոլեր ուսումնասիրության արդյունքները:

-Աշխատանքը բավականին ծավալուն է, ինչը թույլ չի տալիս լիարժեք ներկայացնելու դրված դրույթները: Ելույթը խմբագրման և ընկալելի դարձնելու խնդիր կա,-ասաց Մ.Գրիգորյանը: Մ.Գրիգորյանն առաջարկեց աշխատանքում փոփոխություններ կատարելուց հետո կրկին դնել Խորհրդի քննարկմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Գորիկ Դավթի Ավետիսյանի ներկայացրած աշխատանքը լրամշակումից և աշխատանքում փոփոխություններ կատարելուց հետո կրկին ներկայացնել Խորհրդի քննարկմանը:

6. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՄԵՑԻՆ. Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի առկա ասպիրանտ Հրաչ Սարգսի Հայրոյանի «Լեռնաձալքավոր շրջաններին բնորոշ սողանքային տարածքների ֆիզիկաերկրաբանական մոդելը և գրունտների ամրության որոշման մեթոդիկայի առանձնահատկությունները (ՀՀ տարածքի սողանքների օրինակով)» (ԻԴ.01.01 Երկրաբանություն) գիտական թեմայի վերնագրի մեջ փոփոխություն կատարելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. դոց.Ժ.Աչոյանը իր խոսքում նշեց հետազոտության արդյունքների մասին և քանի որ հետազոտության արդյունքում ստացվել են նոր տվյալներ առաջարկեց աշխատանքի վերնագիրում կատարել որոշակի փոփոխություններ և հաստատել «Կավային գրունտների սահքի դիմադրության փոփոխության օրինաչափությունները, կիրառումը սողանքային լանջերի կայունության գնահատման նպատակով (ՀՀ սողանքների օրինակով)» վերնագրով:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի առկա ասպիրանտ Հրաչ Սարգսի Հայրոյանի գիտական թեման հաստատել «Կավային գրունտների սահքի դիմադրության փոփոխության օրինաչափությունները,

կիրառումը սողանքային լանջերի կայունության գնահատման նպատակով (ՀՀ սողանքների օրինակով)» (ԻԴ.01.01 Երկրաբանություն) վերնագրով:

Խորհրդի նախագահ

Մ.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Մանուկյան